

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքները ներկայացվում են 12 հրապարակումներով՝ Հայաստանի Հանրապետության (ամփոփ), քաղաք Երևանի, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի համար:

Հրապարակման մեջ զետեղված են խորհրդային տարիներին Հայկական ՄՍՀ-ում անցկացված մարդահամարների, անկախությունից հետո Հայաստանի Հանրապետությունում 2001թվականին անցկացված առաջին ազգային մարդահամարի մասին պատմական համառոտ ակնարկ, ինչպես նաև 2011թ. անցկացված մարդահամարի նախապատրաստման, անցկացման և մշակման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն: Դրանում ներկայացված է ՀՀ 2011թ. մարդահամարի հարցաթերթի նմուշը, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշումներով հաստատված և պետական գրանցում ստացած մարդահամարային փաստաթղթերի ցանկը, մարդահամարի կազմակերպման փուլերի սխեմատիկ պատկերը, և մարդահամարի ամփոփ ցուցանիշներով ձևավորված ելքային աղյուսակային տվյալները: Այն է՝ համապատասխան տեղեկություններ բնակչության թվաքանակի ու տարածքային բաշխվածության, ժողովրդագրական բնութագրերի, կրթական մակարդակի, սոցիալ-տնտեսական բնութագրերի, ազգային կազմի, միգրացիայի, տնային տնտեսությունների քանակի ու կազմի, բնակչության և տնային տնտեսությունների բնակության պայմանների վերաբերյալ:

ՀՀ 2011թ. մարդահամարի հարցաշարում ընդգրկված տնային տնտեսությունների գյուղատնտեսությամբ զբաղվելու, ինչպես նաև մարդահամարին նախորդող 12 ամիսների ընթացքում տնային տնտեսություններում արձանագրված ծննդյան և մահվան դեպքերի վերաբերյալ հավաքագրված տվյալները չեն ներառվել սույն հրապարակման մեջ՝ դրանց ոչ ամբողջական լինելու հանգամանքով պայմանավորված:

Հրապարակումը նախատեսված է հանրության լայն շրջանի համար:

